№ 103 Յունիսի 11 Ուրբաթ 1882 Յունիսի 11 Ուրբաթ № 103

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՌՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գաղթականութիւնը Թիւրքայ Հայաստանից։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Արդուինից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ֆրանսիա։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Նամակ Թիւրքիայից։

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

—

Թէ Բերլինի կոնգրեսից առաջ, թէ այդ ժողովի ժամանակ և թէ վերջապէս նրանից յետոյ Թիւրքայ հայերը իրանց երկրի համար Թիւրքիայից և Եւրոպայից վերանորոգութիւնները պահանջելու ժամանակ համերաշխ չէին իրանց հայրենիքի այլացեղ բնակիչների հետ, Հայաստանի միւս ազգաբնակութիւնների հետ, որոնց վիճակը նոյն է, ինչ որ հայերի վիճակը։ Իրանց պահանջներով ներկայանալով Եւրոպայի առջև Թիւրքայ հայերը առանձնացած էին։

Եթէ Բերլինի կոնգրեսի ժամանակ հայերը վերանորոգութիւններ պահանջէին ոչ թէ միայն իրանց համար, հայերի համար, այն էլ գուցէ միայն լուսաւորչական հայերի համար, այլ Թիւրքայ Հայաստանի վիճակից ամբողջ ազգաբնակութեան համար, —կարելի է հաստատ ասել որ նրանց պահանջները աւելի կշիռ կունենային եւրոպացիների աչքում։

Կ. Պոլսի ինտելիգենցիան այդ չը հասկացաւ. նա նոր է սկսում հասկանալ այդ ճշմարտութիւնը։ Դորան Թող վկայ լինի „Մշակի“ 98 համարի մէջ հրատարակված մեր Մ. Վ. Թղթակցի նամակը։

Անդադար կրկնելով որ հայի թշնամին Թիւրքայ Հայաստանում իր դրացի քիւրդն է կամ Թիւրքը,—հարցը չէր պարզվում։ Հիմա նոր են սկսում հասկանալ որ շատ անգամ հայը աւելի մեծ թշնամի է հային, քան թէ քիւրդը և Թիւրքը, նայելով թէ որ դասակարգին է պատկանում հայը։

Հայաստանի Թիւրք երկրագործը, քիւրդ հովիւը կամ քիւրդ մշակ բանւորը չեն կարող երկրագործ, բանւոր, արհեստաւոր հայի թշնամիներ լինել, քանի որ նրանց բոլորի վիճակը մի է. նրանց դիրքը, նրանց յարաբերութիւնները դէպի հայ վաշխառուն, դէպի Թիւրք տեղական պաշտօնեան, դէպի քիւրդ բէյը միատեսակ են։ Հայաստանցի հայ, Թիւրք և քիւրդ ստորին դասի մարդիկ նոյն չափով ճնշվում են հայ վաշխառուից, Թիւրք պաշտօնեայից և քիւրդ բէյից, կամ քիւրդ աւազակապետից։

Ուրեմն երկրագործ, բանւոր, մշակ, արհեստաւոր Թիւրքի, հայի և քիւրդի մէջ համերաշխութիւնը, եղբայրութիւնը հնարաւոր է, քանի որ նրանց բոլորի վիճակը և շահերը մի են։

Եթէ նրանց մէջ հաստատվէր համերաշխութիւն, եթէ Հայաստանցի հայը Թիւրքիայում առանձնացած դիրք չունենար, Թիւրքիան չէր ասի Թէ „ես միայն հայերի համար չեմ կարող հրատարակել բարենորոգումներ, այլ պէտք է ամբողջ երկրի համար այդ բարենորոգումները հրատարակեմ։“ Եւ այդպիսով ոչ ոքի համար չէ հրատարակում, քանի որ այդ վերանորոգութիւններ պահանջողները ազգաբնակութեան մի մասն են կազմում միայն։

Երբ Հայաստանի հայ, Թիւրք և քիւրդ ստորին ժողովրդի մէջ հաստատվէր իրանց ձգտումների, իրանց պահանջների մէջ համերաշխութիւն, հայը ստիպված չէր լինի անդադար գաղթել իր հայրենիքից, որովհետև այն ժամանակ չէր ունենայ իր հայրենիքում թէ բարոյական և թէ տնտեսական առանձնացած դիրք։

Բայց ինչպէս անել որ այդ ցանկալի համերաշխութիւնը հաստատվի Հայաստանցի այլացեղ, բայց վիճակակից ժողովրդների մէջ։

Դորան մենք շատ անգամ պատասխանել ենք և այժմ էլ կրկնում ենք. այդ համերաշխութիւնը կարող է հաստատվել տնտեսական ճանապարհով։ Այդ նպատակին հասնելու համար միջոցներից մինը և գուցէ ամենազօրաւորը Թիւրքայ Հայաստանում արուեստանոցների հիմնելն է։

Աշխատանքը, արուեստը, տնտեսական ընդհանուր վիճակը ամենից լաւ կապում են մարդկանց միմեանց հետ։

Դուք շատ անգամ տեսնում էք Թիֆլիսում մշեցի հայ մշակներին. նրանց մէջ պատահում են և մշեցի քիւրդեր, որոնք ոչինչով չեն ջոկվում հայերից և եթէ չը հարցնէք սրանց ով լինելու մասին, երբէք չէք ճանաչի Թէ նրանք քիւրդ են և ոչ հայ, այն աստիճան մարդկանց կապում, հաւասարեցնում, միակերպացնում, եղբայրացնում, միմեանց համերաշխ դարձնում՝ ընդհանուր վիճակը, ընդհանուր աշխատանքը։

Թիւրքայ Հայաստանում պէտք է բաց անել աշխատանքի նոր ասպարէզներ։ Եթէ Հայաստանցի մարդը գաղթում է իր հայրենիքից, նա գաղթում է նախ որովհետև առանձնացած դիրք ունի իր հայրենիքում, շրջապատված լինելով Թշնամիներից և երկրորդ՝ որովհետև աշխատանք չէ գտնում իր հայրենիքում։ Նախ պէտք է Թշնամիներին բարեկամ դարձնել, կապվելով նրանց հետ ընդհանուր շահերով և երկրորդ՝ պէտք է աշխատանքի նոր աղբիւրներ բաց անել։ Ամեն ձեռնարկութիւն, որ Թիւրքայ Հայաստանում կը բացանի աշխատանքի նոր աղբիւրներ, նա մեր համակրութեան և քաջալերութեան արժանի պէտք է լինի,—լինի դա արհեստանոց, լինի դա երկրագործական դպրոց, լինի դա գործարան և այլն։

Երբ սով էր Թիւրքայ-Հայաստանում և այդ պատճառով գաղթականութիւնն էլ այդ երկրից սաստկացաւ, հայոց հասարակութիւնը նուիրեց բաւական մեծ դումարներ այդ աղէտին դէմ առնելու համար։ Բայց մի՞թէ պէտք է զոհել միջոցներ միայն այն ժամանակ երբ մի աղէտ, մի տառապանք յայտնվում է. աւելի լա՞ւ չէ արտասովոր դժբաղդ դէպքի նորից կրկնվելուն նախապէս առաջն առնել։

Մենք լսում ենք որ Վասպուրականի մէջ այժմ դիտաւորութիւն կայ հիմնել առաջին արհեստանոց։ Եթէ հայոց հասարակութիւնը ըմբռնել է մեր միտքը, նա չէ կարող չը համակրել այդ գաղափարին։ Եթէ հայը օգնել է նիւթապէս սովեալներին, թող նա նիւթապէս օգնի այն ձեռնարկութիւններին, որոնք հաստատ հիմք բռնելով և բազմանալով, կարող են սովին և գաղթականութեանը առաջն առնել։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՐԴՈՒԻՆԻՑ

—

Յունիսի 3-ին

Մայիսի վերջերում Բաթումից այստեղ հասաւ Դօրպատի համալսարանի մագիստր, գերմանացի Վիլհելմ Պետերսօն, որ կը կատարէ բնագիտական, աշխարհագրական և ազգագրական դննութիւններ։ Պ. Պետերսօն ճանապարհորդում է «Ռուսաց կայ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 29 մայիսի

Նախորդ նամակներով երկար խօսեցանք պատրիարքի հրաժարականի հարցի վրայ, բայց նիւթն այնքան կարևոր է, որ կը ստիպվինք այս անգամ ևս քննել խնդիրը մի քանի տեսակէտներով։ Այս տեսակ հարցերու մէջ հետզհետէ արգելքներ կելլեն մեր առաջ գրելու համար։ Երբ հոս կուգան «Մշակի» Թիւերն ու մեր անձնական բարեկամներն կը տեսնեն անհաճոյ գրուածներ իրենց կամ իրենց գործոց նկատմամբ մեզ կծու դիտողութիւններ կընեն։ Սակայն անոնց կը պատասխանենք Թէ՝ երբ իրենք գործող կը հանդիսանան մենք ալ մեզ կը վերապահենք դատելու և քննելու մեր կատարեալ ազատութիւնը։ Ինչու Թղթակից մը զոհէ բաւական ժամեր գրելու համար։ Երբ Թղթակիցը չունի անձնական նկատումներ զորս յաջողցնելու համար գրիչ շարժէ. երբ Թղթակիցը այնքան Թեթևսոլիկ չէ որ հրապարակ նետուի որպէս զի ծածուկ անուան մը ներքև իր բուն իրական անունը գովէ և զայն ժողովուրդին յիշեցնէ, երբ չը կան այսպիսի գաղտնի դիտաւորութիւններ ինչ բանի համար գրել։ Պատճառը պարզ է. փոքր ինչ մանակցել անոնց որք կը մշակեն Ռուսիոյ և Թիւրքիոյ հայոց յարաբերութիւնները։ Այդ ինչ բանի օգտակար է այդ փոքր ինչ աշխատութիւնը երբ ընթերցողը չունի զրողին վրայ վստահութիւն։ Եւ ոչինչ այնքան կօգնէ ընթացնելու ընթերցողին միտքը քան մշտական այն կասկածը Թէ արդեօք կը խարեն զինքը։ Այդ կասկածը միշտ կենդանի կը պահէ ընթերցողի մտքի մէջ Թղթակից մը որ իր բարեկամաց լաւ կողմերը կը տեսնէ միայն, մոռնալով անոնց թերութիւնները. հրապարակ կը հանէ հակառակ եղող անձանց պակասութիւնները լռելեայն անցնելով անոնց լաւ գործոց վրայ։ Այս մի քանի նկատողութիւնները կը յանձնենք մեր բարեկամաց ուշադրութեանը աւելցնելով Թէ՝ լաւագոյն է մեզ համար սրբել գրիչն ու մէկդի ելլել, քան անկախ կերպով չը կարենալ յայտնել մեր համոզումներն։ Կանցնենք մեր խնդրոյն։

Ներսէս սրբազանի հրաժարականի առթիւ այս վերջի չարաթներս կը հետևինք այնպիսի ընթացքի մը որ ամեն տեսակէտով վնասակար է ազգին, Թէ ներկային մէջ և Թէ ապագային։ Խոհեմութիւնն ու խոհականութիւնը չեն որ մեզ ղեկավար կըլլան։ Երկար ատեն է որ մեքենայութիւնք և անձնասիրութիւն այսքան հզօր չէին տիրապետած մեր մէջ։ Ո՞վ է մեղաւորը. առանց բացառութեան ամեն անոնք որ գործօն դեր մը կը կատարեն։ Պատրիարքի հրաժարականն է որ այս մեծ գայթակղութեան քարն է եղած։—Պատրիարքը կուզէ վերադառնալ իր աթոռը Թէ ոչ։—Այս հարցման որոշ պատասխան տալն անհնար է։ Այս անստուգութիւնն է որ տեղի կուտայ ամեն անտեղութեանց։ Բայց պիտի ըսէք, ինչպէս կարելի է որոշ չը գիտնալ։ Իրողութիւնն այս է։ Եթէ պատրիարքի ընթացքին կէսը նկատողութեան առնենք և իրաց վիճակը աչքերնուս առջև բերենք, պիտի ըսենք Թէ պատրիարքը պարտաւորուած է անդառնալի կերպով հրաժարիլ և իր միջոցներն ալ ըստ այնմ ընտրած է։—Իր վերջին հրաժարականի մէջ պատրիարքը այնպիսի պահանջներ կընէ որք չատ արդար են և որոց եթէ զոհացում տրուի, այն ատեն միայն պիտի կարենայ աթոռ վերադառնալ։ Այդ հրաժարականն էր որ ազգի առջև բարձրացուց առաւել ևս պատրիարքի յարգը։ Եթէ պատրիարքը առանց զոհացում սանալու աթոռ վերադառնայ, իր արժանապատուութիւնը վտանգի տակ է։ Դուռը այս պահանջներուն խուլ կը մնայ։ Պատրիարքը դայս առաջուց լաւ գիտէր. եթէ կուզէր պատրիարք մնալ, հրաժարականը տալու հարկ չը կար, ոչ ոք զայն կը պահանջէր իրմէն։ Հրաժարելէն վերջ այնպիսի ընթացք մը բռնեց կառավարութեան մօտ որ հրաժարականը ետ առնելու գաղտնի դիտաւորութիւն ունեցողը այսպէս չէր ըներ։ Ետ դառնալու ամեն դուռները պատրիարքը առաջուց գոցեց։ Ասոնք իրողութիւններ են որք տարակուսի ենթակայ չեն։—Սակայն ինչու համար մի քանի ամիսներ նենգութիւններ տեղի ունենան որպէս զի հնար չըլլայ Ներսէս սրբազան կրկին պատրիարք ըլլայ։ Եկող չըլլայ որ արգելէն։ Այս երևոյթն ալ կը մեկնուի պատրիարքի ընթացքի միւս կեսէն։ Պատրիարքը դառնութիւն մը ցոյց կուտայ, կծու խօսքեր, կծու ակնարկութիւններ կընէ անոնց որք իրեն դէմ գործողք կը նկատուին։ Այս ընթացքը այնպէս մը կը հաւատցնէ ոմանց Թէ՝ պատրիարքը կը զայրանայ անոնց դէմ որ իրեն արգելք կըլլան նորէն պատրիարք ըլլալու։ Իսկ մենք կը կարծենք որ պատրիարքը կը դառնանայ վասն զի կը տեսնէ Թէ այս եղանակաւ ոմանց գործելէն ազգին վնասներ առաջ կուգան, և եթէ իր հրաժարականի հարցը լաւ կերպով ուղղէին, անկէ ազգին օգուտ կրնար ըլլալ։

Բայց ամեն ինչ խանգարողներն, չարիքն աւելի սաստկացնողներն և ազգը խելացի ճամբէն հեռացնելու աշխատողներն մի քանի անձեր են։ Ասոնք ինքզինքնին իբր պատրիարքի գործակատարներն ցոյց կուտան և իբր Թէ պատրիարքի կողմէ անպաշտօն կերպով կը խօսեն ու կը գործեն։ Շատերուն մէջ այդ պարոններու նկատմամբ այս կարծիքը տարածուած է, և մենք կը փափաքէինք որ պատրիարք սրբազանը այդպիսի անձանց չնորհակալութիւն յայտնելով իրենց տեղը իրկէր, վասն զի չարեաց գլխաւոր պատճառներն եղան։ Եթէ սրբազանը խորհրդականներու պէտք ունէր, շատ լաւ կընէր դիմէր մեր վաճառական և էմնաֆ ըսուած դասուն։ Շատ են ասոնց մէջ ազգասէր մարդեր, որք թերևս Ժաքօպէններու պատմութիւններն աղէկ չը գիտնան, բայց բուն ազգին կարծիքը կը ներկայացնեն։ Անձնական ոչ և է նկատում չունեցող, անշահախնդիր անձեր են որք շատ աւելի ծառայութիւն կրնան մատուցանել պատրիարքի և ազգին, քան այն անձերը որք ազգէն պիտի ապրին, ազգային գործերը իրենց յառաջնանալու ասպարէզ կընտրեն, և իրենց համար հոգ չէ Թէ խանգարուին, կործանին ազգին ամեն օգտակար գործերն, բաւական է որ իրենց անձը գովուի, կամ լաւ ևս անամօթաբար ինքզինքնին գովեն որպէս զի պաշտօնի հասնին ու ապրին։

սերական Աշխարհագրական ընկերութեան» յանձնարարութեամբ: Պարոնը Արդուինում պարապւում է այժմ գլխաւորապէս շրջակայ բլուրների վրայ միջատների քննութեամբ: Այստեղ նա երեք շաբաթի մօտ կը մնայ և յետոյ կանցնի Արդանուչ: Յարգելի գիտնականը գիտողութեան արժանի առարկաներ կը գտնէ մեր երկրում: Նորա ուսումնական ճանապարհորդութեան ասպարէզ լինելու են «Բաթումի նահանգը, Անդրկովկաս և Արմէնիա:»

Անցեալ օր Էջմիածնից այստեղ եկաւ մի Ունիացի հայ-լուսաւորչական քահանայի հետ տեսնուելու առիթ ունեցանք: Քահանային ընկերակցում էր իր հօրեղբօր որդին, որ 10 տարի առաջ ուսուցչութիւն է արած եղել մի և նոյն գիւղում: Ունիա մի վիճակ է Տրապիզոնի վիլայէթի Ջանիկ սանջակի մէջ: Տէր հայրը, տէր-Միքայէլ Թահմազեան, նախ պատմեց մեզ ընդարձակօրէն իր ուխտի երթալն Էջմիածին, այնտեղ տեսած, լսած, սուրբ մեռոնի օրհնութեան հանդէսը, և այլն: Յետոյ նա հառաչելով բացականչեց թէ իր և բովանդակ իր ծուխին համար փնտռում է պատշաճ տեղ Ռուսիա գաղթելու: Բնականապէս մեզանից եւ հարցնող եղաւ թէ ինչ էր իրենց այդ ստիպիչ գիտաւորութեան պատճառ: «Եղբայր, ասաւ տէրտէրն, որ հայերէն լեզուն բաւական մաքուր էր խօսում, մենք մեր երկրում, բոլորնիս ալ հողագործ ենք, մեր կեանքը հողն է: Իսկ հիմայ Թիւրքիա այստեղացի մուհաջիրներուն (գաղթականներին) բերաւ ամենն ալ մեր հողերու վրայ տեղաւորեց: Մեր ձեռքերում ալ այնքան հող չը մնաց, որ անով մեր ապրուստը կարողանանք հոգալ: Էհ, ինչպէս անենք հապա մենք, խօշ, քաղցած մնալու չենք: Հիւքեմէթը մեր արտունջներուն ականջ չը կախեր. հէչ Թիւրքի կողմը կուծաղնէ հայուն կու բռնէ: Մեր մէջէն քանիներ գնացին գանգատեցան փաշաներու, բէկերուն ձեռք ու ոտ ինկան, բայց ինչ որ է, էն է, ամենին օգուտ չի եղաւ:... Մենք օր օրուայ վրայ թշուառութեան մէջ ենք, Աստուծոյ խաթեր համար ըլլի, մեզի մէկտեղ ցուցուցէք, որ ամովտեղով այստեղ գանք, բնակինք:» Այս վերջի առաջարկութիւն շատ տեղ կրկնեց մեր տէրտէրն. սակայն կէս ժամվայ խօսակցութիւնից յետոյ թէ նա, թէ ընկերն համոզվեցան չը խալսիլ իրեն, հայրենիքից: Յետոյ հարցումներ արինք Ունիայի հայոց մասին և տէրտէրը մեր հարցումներին գոհացուցիչ պատասխաններ տուաւ: Ունիայի հայերը, ինչպէս նա պատմեց, սկզբից գաղթած են եղել Անիից Հէմշէն. Հէմշէնից ալ խալամութեան սոփպողական բռնութիւններէ փախած, եկել են Տրապիզոն և անտեղ էլ հանգստութիւն չը գտնելով գաղթել են Ունիա: Այսպէս և Ունիայի հայեր, Անիից Հէմշէն, Հէմշէնից Տրապիզոն, Տրապիզոնից ալ Ունիա, սաել է երեք գաղթականութիւն կատարելուց յետոյ, հիմայ ուզում էին մի չորրորդն էլ կատարել: Խեղճ ժողովուրդ, որ միշտ տեղափոխութեան մէջ է փնտռում իր հանգստութիւնը:....

Ունիայի գիւղաքաղաքում կայ 70 տուն իսկ 6 գիւղերում 500 տուն հայ: Սորանցից մեծագոյնը՝ Իւչ փունար գեղն ունի եղել 130 տուն հայ և երկու եկեղեցի: «Ամեն մէկ գիւղի մէջ մէկ եկեղեցի, եկեղեցւոյն մօտ մէկ դպրոց, մէկ քահանայ և մէկ ուսուցիչ կայ» ասաց տէրտէրը: Ներկայ եղողներից մի հայ-կաթօլիկ յատկապէս խօսք բացարեց տէրտէրի հետ, թէ Ունիայում քանի ֆ ր է ն կ կայ, թէ ինչպէս են վարվում լուսաւորչականների հետ, եթէ ինչ ինչ գաղափար ունի նրանց մասին և այլն: Հայ-կաթօլիկներ—եղաւ տէրտէրի պատասխանը, հասկանալով ֆ ր է ն կ բառին տրված իմաստը,—Ունիայում չը կան, այլ Սամսոն քաղաքում որ իրենց մօտ է: «Բայց անոնք, կրկնեց նա, հայ են այնպէս ինչպէս մենք: Կրօնը փոխելով, խօշ, արիւններն ալ չեն փոխած»:... Հասկացվեցաւ որ այդ մասին տէրտէրը, խեղճ և ազնիւ, աւելի անմեղ է եղել—քան բազմաթիւ լուսաւորեալները հայ հոգևորականութեան:

Երկրորդ օրը տէրտէրը ուղևորվեցաւ դէպի Բաթում և անտի պէտք է երթար Տրապիզոն, Սամսօն և վերջապէս Ունիա:

Ահա, այդ Ունիայից ալէս, ով գիտէ, դեռ բանիներ կան, որոնք գաղթականութեան ոգով են լցվել: Սիվասի վիլայէթի Փրքնիկ գիւղի կաթօլիկ հայեր, արդէն բոլորովին պատրաստվել են և նրանց երկու ներկայացուցիչներ անա երկու ամսվան մօտ է որ Բաթումի և Կարսի նահանգապետներու մօտ են դեգերում, բնակութեան տեղ բռնանալու համար: Իրենց գիւղից 50 գերդաստան արդէն կազմ և պատրաստ կեցել են եղել, որ լուր ստանալու պէս պէտք է անով, տեղով ճանապարհ ելնեն դէպի այս կողմ, հաւանականաբար Կարսի նահանգը: Այդ խեղճեր չեն ուզում ոչ մի ձայնի լսել, դրանք այժմ Կարս են: Սրանց տրտունջն էլ նմանապէս նոր եկող մուհաջիրների մասին է, որոնք իրենց կալուածների վրայ են տեղաւորվել, Փրքնիկում:

«Մշակի» 89 թւում կարդացի թէ պ. Խրղաչեանց նուիրում է գիւղական ուսումնարաններին 100 օրինակ իր յօրինած բրօշիւրից «Հացի բզեզ»: Արդեօք կարելի է խնդրել որ յարգ. հեղինակը յանձն առնու տեղիս հայ-կաթօլիկ կամ հայ լուսաւորչական ուսումնարանին էլ մի օրինակ նուիրել: Եթէ ընդունվի մեր խնդիրը, կարելի է ուղարկել մեր հասցէով. Артвинъ. Аракелу Саруханяну և մենք կը յանձնենք ուր հարկն է:

Առաքել Սարուխանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Վերջապէս Ռուսաստանի փոստը ստացվեցաւ Թիֆլիսում:

—

«Մշակի» № 102 մէջ տպված անստորագիր պ. Կուզմինի պատասխանի մասին մենք ուզում էինք միայն հետեւեալ փոքրիկ նկատողութիւններն անել: Մենք մեր 79 համարի առաջնորդող յօդուածում չենք ասել որ ստացանք թղթակցութիւնը անստորագիր, այլ որ տպում ենք նըրան անստորագիր: Մենք չենք խօսում այն բանի վրայ թէ որքան քաղաքավարի կամ անքաղաքավարի է պ. Կուզմինի պատասխանը, միայն չենք կարող մեր զարմանքը չը յայտնել այն բանի վրայ թէ պարոնի նամակի մէջ նկարագրված անցքերը ոչ ոք չիմացաւ: Նա նկարագրում է մի ամբողջ ապստամբութիւն. Զարաքլիսայի և շըրջակայ գիւղերի բնակիչները գաւազաններով զինուորված կանգնած էին դաշտերում, մեծ ճանապարհների երկայնութեամբ, ամեն կողմից ամբոխը անտառապետի ճանապարհ էր կտրում, գիւղի փողոցների վրայ ժողովուրդ էր կանգնեցրած, ամբոխը գռներ էր կոտրում, ուզում էր բռնել պ. Կուզմինին, որ փախչում էր ձիով և այլն և այլն: Զարմանալի է որ այդ ահագին աղմուկի վրայ ոչ ոք ոչինչ չէ հաղորդել ոչ մի լրագրին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Փարիզի մէջ լուրեր են տարածված, թէ հաւանական է, որ եթէ ոչ ամբողջ ֆրանսիական այժմեան մինիստրութիւնը, գոնէ Ֆրէյսինէ հրաժարական կը տայ, գրում է „Голосъ“: Դժուար է ասել, թէ որքան ճիշդ են այդ լուրերը, բայց անկասկած շատ պատճառներ կան այդպիսի լուրերի տարածման համար: Ֆրէյսինէի դրութիւնը վատացաւ այն օրից, երբ նա անզգուշութեամբ յայտնեց պատգամաւորների ժողովի մէջ, որ Ֆրանսիան ոչ մի դէպքում զինաւորված միջամտութիւն չի գործի եգիպտական գործերին: Եւ, երբ նկատեց, թէ նրա խօսքերից շփոթվեցան մինչև անգամ իր կողմնակիցները, աւելացրեց, որ նրան լաւ չը հասկացան: Զանից դուրս խաղաղասէր մինիստրին անկումից ազատեց այն հանգամանքը, որ նրա հակառակորդը Գամբետտա էր, իսկ Գամբետտայից վերջին ժամանակներում պատգամաւորների ժողովը մեծ երկիւղ է կրում: Եթէ Գամբետտա չը միջամտէր վիճաբանութիւններին, Ֆրէյսինէ ստիպված կը լինէր հրաժարական տալ:

Ներկայումս Գամբետտայի այդ միջամտութեան տպաւորութիւնը անցաւ և Ֆրէյսինէի եգիպտական քաղաքականութեան հարցը պղտորվեցաւ այն մտքի ծնունդից, որ եթէ այժմեան մինիստրութիւնը հրաժարական տայ, կառավարութիւնը Գամբետտայի ձեռքը կանցնի: Շատերը անբաւականութեամբ նկատում են, որ թէպէտ ֆրանսիական նաւատորմը եգիպտական ջրերի մէջ է գտնվում և ֆրանսիական կառավարութիւնը առաջարկեց եւրոպական կոնֆերենցիա գումարել եգիպտական հարցը քննելու համար, բայց Ֆրանսիային ոչ ոք ի նկատի չէ առնում և կարծես թէ նա առանձնացած է: Անգլիան ինքն իրան առաջնակարգ դերք բռնեց այդ հարցի վերաբերութեամբ: Անգլիական կառավարութիւնը չը բաւականացաւ երեք նաւ ուղարկելով եգիպտական ջրերը. նա պատրաստում է և տեղափոխում է իր նաւատորմները և Միջերկրական ծովի մէջ կենտրոնացած ծովային պատերազմական ոյժերը: Անգլիական կառավարութեան անդամները գրեթէ ամեն օր համայնքների ժողովի մէջ յայտնութիւններ են անում եգիպտական հարցի վերաբերութեամբ այն նպատակով, որ ցոյց տան Բ. Դրանը, թէ Անգլիան ինչպէս է նայում Եւրոպայից թողլտրած թիւրքերի միջամտութեանը եգիպտական գործերին: Արևմտեան մամուլը անդադար տեղեկութիւններ և լուրեր է հաղորդում, թէ ինչպէս են վերաբերվում եգիպտական գործերին անգլիական, աւստրօ-ունգարական, գերմանական, իտալական և մինչև անգամ ռուսաց կառավարութիւնները, մինչդեռ Ֆրանսիայի մասին ոչ ոք չէ հոգում, կարծես թէ նա գոյութիւն չունի:

Քաղաքականութեան հետ ծանօթ անձինք հասկանում են, որ այդ օտարոտութիւնը Ֆրէյսինէի յայտնութեան հետեւանքն է, որ եգիպտական գործերի վերաբերութեամբ կրկնեց այն սխալը, որ գործեց Բարթելէմի Սենտ-Իլեր եւրոպական ծովային ցոյցի ժամանակ Թիւրք—չերնո-

---

Ըսինք թէ այս անձերն են որ իրենց չարութեամբըն ու յիմարութեամբն ամեն չարեաց պատճառ կըլլան և պատրիարքի հրաժարականը բռնութեամբ այնպիսի շաւղի մը մէջ կը դնեն որ չարաչար կը վնասէ ազգին: Բացատրենք այս կէտը որ բանալի է այս վերջի շաբաթներս պատահած ու պատահելիք անախորժ դէպքերուն: Միշտ անձնապէս համոզուած ըլլալով որ Ներսէս սրբազան երբեք իր հաւանութիւնը չէ տուած այսպիսի ապիրատ անձանց գործերու ինչպէս մայիս 23-ի կիրակին արհամարհեց անոնց հանրագիրները զոր գրած էին ամբոխի ձեռքը:

Պատրիարքը իր հրաժարականը ետ չէր կրնար առնել կամ թէ շատ դժուար կերեւար որ կարենար ետ առնել: Այս խորհրդութիւնը ամենքն ալ ցաւօք կը տեսնէին: Մենք «Մշակի» կը գրէինք թէ այն օրը որ Պատրիարքը հարկ տեսաւ սուլթանի կամացն իսկ չը հնազանդիլ և հրաժարականը ետ չառնել, այնօրէն պատրիարքը որոշած էր յաթոռ չը վերադառնալ առանց ապահովութիւններ ստանալու թէ իր ազգին վիճակը սակաւ ինչ պիտի բարւոքի: Ինչ որ ալ ըլլայ սուլթանը երկրին բարձրագոյն իշխանութիւնն է, ներելի չէ որ անոր հպատակ պատրիարք մը մերժէ նորա հրաւէրը և անսայ ուրիշ հրաւէրի մը: Զայս գիտէր Ներսէս սրբազան և ըստ այն մեր գործը տեսաւ: Կը սպասէին ամենք որ Դրնէն երրորդ անգամ հրաւէր մը պիտի գար, բայց Դուռը որոշած էր այդ հրաւէրը չընել, ինչպէս այն ատեն «Մշակին» ալ գրեցինք: Երբ Ապտիւրահման բաշա առաջին նախարար եղաւ, կըսպասէին շատերը որ հրաւէր մը խրկէ Ներսէս սրբազանի և տեսակցին այս հարցի վրայ: Այս պատահած էր առջի նախարարներու օրով, Էտհեմ և Խայրէտտին բաշաներու ատեն: Սակայն այդ հրաւէրը չեղաւ, ուսկից յայտնի կը տեսնուէր թէ՝ կառավարութիւնը այլ ևս չը պիտի ուզէ Ներսէսի ըսել որ հրաժարականդ ետ առ: Արդեօք մեր դիւանագէտներու ոմանց կողմանէ այսպէս եղաւ. կրնանք կարելի է ըսել:—Ի՞նչ կը մնար մեզ ընել. Նախ ազգովին մերժել պատրիարքի հրաժարականը: Յայտնի էր թէ պատրիարքը իր հրաժարականը ետ չէր առներ, գիտէր յիշած մեր պատճառներէն զատ, Ներսէս սրբազան չէր կրնար կրկին խոնարհաբար Դուռը երթալ: Այս հրաժարականին մերժումը պէտք էր ամենայն պարզութեամբ կատարուէր և երբ պատրիարքը ետ չառնէր, անմիջապէս նոր պատրիարքի մը ընտրութեան ձեռնարկել: Սակայն սա պայմանաւոր նորընտիր պատրիարքը անմիջապէս հրաժարական խրկէր յայտարարելով թէ՝ քանի որ Ներսէս սրբազանի պահանջներուն գոհացում չէ տրուած, ինքն ալ ինչու պատրիարքութիւն ընէ, վասն զի նոյն բաները պիտի պահանջէ: Եթէ այսպէսով այս նորընտիրն ալ հրաժարի, վերջէն ուրիշ մ՚ալ կընտրենք, նա ալ նոյնը կըսէ, այսպէս շարունակաբար.—Ինչ կըլլար հետեւութիւնը: Երբ հայ ժողովուրդի բոլոր առաջնորդներն միօրինակ խօսին, երբ Ազգ. ժողովը իր ընթացքէն չը շեղի, կը կարծէ՞ք որ Դուռը իր ընթացքը չը փոխէր: Միթէ կը կարծեն որ երբ ամբողջ ժողովուրդ մը այսպիսի բողոք մը կընէ, լսելի չըլլայ և չը յուզուի Եւրոպիոյ հասարակաց կարծիքն ալ տեսնելով թէ՝ քրիստոնեայ ժողովուրդի մը ամենապարզ պահանջումները նկատի չեն առնուիր և իրեն գլուխ մը չը գտնուիր այսպէսով: Անշուշտ Դուռը էֆէնդիի մը գլուխ վերցար անցնելով մեզ պատրիարք չըներ:—Սակայն այս այսպէս չեն ըներ և կուզէն ազգին հաւատցնել թէ Դուռը ազգին գոհացում կուտայ, ասիկայ մեր դիպլօմաթները կընեն, և միւս չարամիտներու խումբն ալ ասկէ օգուտ կը քաղէ որպէս զի բոլորովին ներքին հարցի մը կերպարանք տան պատրիարքի հրաժարականին և իրենց խաղը խաղան: Վասն զի եթէ մեր յիշատակած կերպովը ըլլայ գործը, իրենք կատարելիք դեր չունին: Արդ ինչ միջոցներու դիմեցին այս անձերը: Նախ ուզեցին տարածել այն համոզումը թէ Դուռը պատրիարքին վրայ կասկած մը չունի, անոր վերայ ծուռ աչքով չը նայեր և պատրիարքին պատճառաւ չէ որ ազգին գործերն դէպ կերթան Դրան հետ: Այս գաղափարին դէմ հոս մարտնչել կարելի չէր: Այս քարոզութիւնները որ կընեն կէսը սուտ է, կէսը իրաւ: Սուտ է թէ կառավարութիւնը պատրիարքի դէմ գանգատներ չունի և անոր հետ աղէկ է: Ալ քանի մը տարիէ ամեն անցածներ կը տեսնենք: Եւ եթէ Դուռը պատրիարքի հետ շատ աղէկ է, ուրեմն ինչ էին այն արի, անվեհեր, քաջ ածականներն զոր շռայլեցին Ներսէս սրբազանի: Եթէ Դուռը աղէկ է, այն ատեն ո՞ւր է վտանգը սրբազանին համար, և եթէ վտանգ չը կայ, ինչպէս սրբազանը քաջ կըլլայ: Սակայն մենք այս կարծիքէն չենք և սրբազանը արժանի կը սեպենք իր ընդունած արիութեան ածականներուն, և համոզուած ենք թէ Դուռը անոր ձեռքէն ազատիլ կուզէ: Սակայն ստոյգ է միւս մասը որ Դուռը Ներսէս սրբազանի պատճառաւ չէ որ միշտ վատ վիճակի մէջ կը պահէ հայ ազգին վիճակը: Հայ ազգը փճացնելն Դրան յայտագիրն էր որ պատրիարքը որ կը մարմնէր այդ քաղաքականութեան դէմ նա միշտ Դրան թշնամանքը իր վրայ պիտի հրաւիրէր:—Սակայն մեր տեսակէտովը չէ որ քարոզեցին ժողովուրդին, այլ պարզապէս ջանացին Դուռը արդարացնել և կերպով մը բերել խնդրոյն ազգային ներքին գործոյ կերպարանքի մը գոյն տալ, ինչպէս տեսաք անցեալ նամակաւ «Մասիսէն» քաղած մեր մի քանի կտորներէն: Ուրեմն առաւօտ մ՚ալ արթնցանք և իմացանք թէ «Մասիս» ու «Հայրենիք» կը հաղորդեն թէ հայոց Ազգ. ժողովն է որ պատրիարքը չուզեր: Բաւական պիտի ապշէինք եթէ գաղանիքը չը գիտնայինք: Պատրիարքը Դրան զոհ էր, վերջը վարչութեան զոհ էր, վերջն ալ Ազգ. ժողովոյ զոհն էր: Անգամ մը որ ալ խնդիրը այս շաւղին մէջ դրին, հետեւութիւնն ալ անոր համեմատ պիտի ըլլար: Երբ այս մեքենայութիւնը տեսնուեցաւ, դայրոյթը սկսաւ մեծ ըլլալ: Դժբաղդաբար ամենքը չէին կրնար աղէկ մը զանազանել պատրիարքին ու ինքզինքն պատրիարքի ներկայացուցիչներն ձեւացնող բաղդախնդիրներին: Թէ գանգատին Ազգ. վարչութեան դէմ այդ հոգ չէ, այլ երբ Ազգային ժողովը, և ազգը կը սկսեն ցոյց տալ իբր Ներսէս պատրիարքը չուզողներ, խնդիրը ուրիշ ծանր կերպարանք կառնէ: Անքաղաքագիտական և անիրաւ զրպարտութիւնը: Բայց ինչ ընել: Պէտք է ամբոխ մը պատրաստել և անոնց գլուխը անցնել:

Անքաղաքագիտական ըսինք և բացատրենք:

գործական վէճի պատճառով: Նրանք հասկանում են, որ մի անգամ փորձված եւրօպական պետութիւնները արդէն միջոցներ են գործադրում, որ ֆրանսիական կառավարութեան յայտնութիւնները անզօր չը դարձնեն նրանց ներգործութիւնը, ինչպէս այդ պատահեց 1880 թուականին: Ֆրանսիացիներից շատերը հասկանում են, որ եգիպտական անկարգութիւնների վերջանալուց յետոյ Ֆրանսիայի միջազգային դերը աւելի աննշան կը լինի, քան թէ մինչև հիմա էր:

Այս բոլորը Ֆրէյսինէի դրութիւնը վատացնում է: Հէնց որ կապացուցանվի, որ Ֆրէյսինէ եգիպտական քաղաքականութիւնը այն հետեւանքների է հասցնում, որոնց գուշակում են այժմ նրա հակառակորդները, ֆրանսիական արտաքին գործերի այժմեան մինիստր անյապաղ կընկնի և որովհետև անկարելի է նրա կուսակիցների մէջ նրան յաջորդ ընտրել, ուրեմն Ֆրէյսինէի հրաժարականից յետոյ այժմեան ամբողջ մինիստրութիւնն էլ ստիպված կը լինի հրաժարական տալ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կրիտ կղզուց ստացած վերջին տեղեկութիւններից յայտնի է, որ այդ կղզու թէ քրիստոնեայ և թէ մահմեդական ազգաբնակութիւնը գրգռված է: Ամեն տեղ ժողովներ են նշանակում Կրիտ կղզին ազատել մահմեդական լծից: Թիւրքաց տիրապետութեան դէմ ընդհանուր անբաւականութիւնը արտայայտվեցաւ մէկ խնդրագրի մէջ, որ ուղարկեցին Բ. Դրանը ազգային ժողովի քրիստոնեայ և մահմեդական անդամները: Խնդրատուները գանգատվում են Կրիտ կղզու արտօնութիւններին դիպչելու դէմ: Խնդրագիրը պահանջում է, որ աղի և ծխախոտի հարկը գործածվի բացառապէս Կրիտ կղզու համար, որ վարչութիւնը վերանորոգվի և որ օրէնքները ընդունելու համար բաւական լինի պարզ մեծամասնութիւն, և ոչ թէ ձայների երկու երրորդ մասը, ինչպէս որ մինչև այժմ էր: Կրիտում չեն խաբվում այն յոյսով, որ իրանց խնդրագիրը յաջողութիւն կունենայ, լաւ գիտենալով, որ Թիւրքաց կառավարութիւնը միայն այն ժամանակն է համաձայնվում իրան համար աւելի նորութիւններ մացնել, երբ ուժով ստիպում են նրան:

—«Ռէյտերի ընկերութեանը» Կ. Պօլսից հեռագրում են մայիսի 26-ից: Լորդ Դիւֆէրին յայտնեց Բ. Դրանը, որ բրիտանական կառավարութիւնը թէպէտ ուրախ է լսելով Թիւրքաց կօմիսարին Եգիպտոս ուղարկելու լուրը, բայց չէ կարծում, որ Դէրվիշ-փաշայի միսիան կարողանայ կօնֆէրէնցիան անօգուտ դարձնել: Նախընթաց օրը, երեկոյեան, մարկիզ դը-Նօայլ Բ. Դրանը նոյն մտքով բացատրութիւն տուեց:

—«Daily News» լրագրի Վիէննայի թղթակցի խօսքերով, սուլթանը աւելի դէպի Արաբի-փաշայի կողմն է հակված, քան թէ խեդիվի, և այդ կողմից յոյս ունի Գերմանիայի և Աւստրիայի օգնութեան վրա:

—«Times» լրագրին Աղէքսանդրիայից հաղորդում են, որ խէդիվ և Դէրվիշ-փաշա դիմեցին Բ. Դրանը խնդրելով ուղարկել 18,000 թիւրքաց զօրք: 450 անձինք են կոտորված: Մտադրութիւն կայ միջազգային յանձնաժողով նշանակել պատժելու համար նորերումս եղած անկարգութիւնների մէջ մասնակցողներին:

—«Times» լրագրին Միլանից հաղորդում են, որ իտալական կառավարութիւնը վճռեց Կապրէրա կղզին սրանից յետոյ Գարիբալդի կղզի անուանել:

—«Romania libera» լրագիրը մռայլ գոյներով է նկարագրում ռումինացի գիւղացիների թշուառ դրութեան պատկերը և պահանջում է անյետաձգելի գործունէութիւն օրէնսդիրների կողմից, եթէ նրանք ցանկանում են, որ յեղափոխութիւն չը լինի: Լրագիրը միւս կողմից չէ ցոյց տալի գիւղացիների այդ աղքատութեան պատճառները:

—«Հավասի ընկերութեանը» Կայիրէից հաղորդում են յունիսի 8-ից, որ, երբ Դէրվիշ-փաշա երկաթուղու վագօնից դուրս եկաւ, նրան աղմկալի ցոյցերով ընդունեցին գեներալները, օֆիցերները, զինուորները և ազգաբնակութիւնը «կեցցէ սուլթան» աղաղակելով: Ոչ մի ցոյց չեղաւ ի պատիւ խեդիվի: Դէրվիշ-փաշային համակրողների թւում չը կար Արաբի-փաշա:

—«Հավասի ընկերութեանը» Կայիրէից հաղորդում են, որ խեդիվը յայտնեց Դէրվիշ-փաշային, թէ ինքն չէ կարող Արաբայի-փաշայի հետ հաշտվել: Հիւպատոսները նոյն կարծիքը յայտնեցին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Խրիստոֆոր Կոլումբի արձանը: Յունիսի 4-ին պէտք է կատարվէր արձանի բացման հանդէսը Պավիայի համալսարանում: Այդ հանդիսին հրաւիրված էին համալսարանների և ակադեմիայի ներկայացուցիչները:

* * *

Լօնդօնի լրագիրները հաղորդում են, որ Նէապօլում նորերումս վախճանված Պասկվալէ Ֆավալէ անունով մէկը բաւական տարօրինակ կտակ թողեց, որ մասամբ Անգլիային է վերաբերում: Ի միջի այլոց հանգուցեալը նշանակեց 6000 ֆրանկ գումարը եւրօպական մի որ և է քաղաքի յայտնի հրատարակչին տալու համար, այն պայմանով, որ այդ հրատարակիչը տպի և ի լոյս ընծայի կտակողի հեղինակած ֆրանսիական լեզուով վիպասանութիւնը «Ջիւլէյա» վերնագրով. և նրա «Անգլիական ընտրութիւններ» անունով 5 գործողութեամբ կօմէդիան և մի քանի ոտանաւորներ, որոնցից մէկը անուանվում է «Վերջին պատասխան:» Ֆավալէ կտակում է անգլիական թագուհուն իր սիրելի հեղինակութիւնը, «Ալբիրա» օպէրան, այն յոյսով, որ նորին մեծութիւնը կը հրամայի ներկայացնել այդ օպէրան յօգուտ Լօնդօնի աղքատների: Յետոյ Ֆավալէ թողնում է բաւական խոշոր գումարներ, որոնց տոկոսները պէտք է բաժինք տրվեն 17-ից մինչև 25 տարեկան հասակի աղքատ աղջիկներին Լօնդօնում, Նէապօլում և իտալական այլ քաղաքներում: Այդ բախտաւորների անունները պէտք է վիճակով հանվեն:

* *

Գերմանական մէկ պաստօրի արկածները: Բրիւսէլի «Indépendance Belge» լրագիրը հետեւեալ դէպքն է պատմում, որ ցոյց է տալի, թէ ներկայ ժամանակում իշխան Բիսմարկի ջերմ երկրպագու լինելը նոյնքան վտանգաւոր է, որքան որ նրա հակառակորդ լինելը: Այդ բանը իր անձի վրա փորձեց Համբուրգի շրջակաների բողոքական մէկ պաստօր: Գիտենալով, որ իշխան Բիսմարկ գտնվում է Ֆրիդրիխսրուէ և ցանկանալով տեսնել կանցլերին կամ գոնէ նրա տանեցիներից լսել մեծ մարդու կեանքի մի քանի մանրամասնութիւններ, պաստօրը ուղևորվեցաւ Ֆրիդրիխսրուէ: Նրան նախազգուշացնում էին, որ իշխան Բիսմարկի կալուածների վրա մեծ զգուշութեամբ հսկում է գաղտնի ոստիկան և որ շատ դժուար է իշխանի հետ տեսնվել: Այնու ամենայնիւ նա գնաց Ֆրիդրիխսրուէ, հասնելով, նա շտապեց իշխան Բիսմարկի ամրոցը գնալ: Բայց բակում արդէն նրան կանգնեցրին: Պաստօրը ցոյց տուեց իր թղթերը. այնու ամենայնիւ նրան դուրս քշեցին այնտեղից: Ամրոցից ոչ հեռու մէկ հիւրանոց նկատելով, նա գնաց այնտեղ, այն յոյսով, որ գոնէ պետական մեծ մարդու կեանքի եղանակի և սովորութիւնների մասին մի բան կարող են պատմել: Իզուր յոյսեր: Նա հարցափորձ էր անում հիւրանոցի աղախնուն: Կինը պատասխանում էր, որքան կարող էր, բայց ճանապարհորդի հիւրանոցից դուրս գալուց յետոյ, աղախինը իր պարտքը համարեց պատմել պարոններին իր կասկածների մասին: Երբ բարի պաստօրը, որի հետաքրքրութիւնը միայն մասամբ էր բաւականացրած, արդէն դիմում էր դէպի երկաթուղու կայարանը, նրա ետեւից հասան ժանդարմները և կալանաւորեցին նրան, հէնց այն րոպէին, երբ նա տոմսակ էր վերցնում տուն վերադառնալու համար: Իզուր նա բողոքում էր իրան կալանաւորելու դէմ. ժանդարմները տարան նրան իրանց գլխաւորի մօտ, որ հարցաքննեցին նրան: Պաստօրին այնտեղ յայտնեցին, որ նրան մեղադրում են այն բանի մէջ, թէ նա կանցլերին սպառնացել և սօցիալիստ է անուանել: Նա բողոքեց այդ անմիտ մեղադրանքների դէմ, և ցոյց տուեց իր դօկումենտները: Նրա թղթերը խարդախված համարեցին: Առանց որ և է դատաստանի, նա բանտարկվեցաւ: Չորս օր թշուառականը նստեց բանտի գաղտնի բաժնի մէջ, և արդէն յուսահատվում էր բանտից դուրս գալ, երբ ալտօնեան դատարանին իմաց տուեց պաստօրի ընտանիքը նրա անյայտանալու մասին: Վերջապէս, հինգերորդ օրը, բազմաթիւ ձևապաշտութիւններից յետոյ, համաձայնվեցան նրան արձակել, խստապէս յանդիմանելով նրան այն գլխացաւութեան համար, որ նա պատճառեց դատարանին: Այդպիսով վերջացաւ այն ճանապարհորդութիւնը, որից պաստօրը շատ ախորժելի բաներ էր սպասում: Բարի պաստօրը երդվեց, երբէք այլ ևս այդպիսի յիմարութիւն չանել: Նա այնու ամենայնիւ չը փոխեց այն համոզմունքը, որ իշխան Բիսմարկ մեծ քաղաքական հանճար է, և ամենքին նա ապացուցանում է, որ մէկ մարդ եթէ իրան այդպէս լաւ պաշտպանում է, կարող է և Գերմանական կայսրութեան շահերը պաշտպանել:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 յունիսի: „Правит. Вѣстн." լրագիրը հաղորդում է. Բարձրագոյն հրամայած է սկսել քաղաքական օրէնքների վերաքննութիւնը և քաղաքական օրէնքների կանօնագրութեան կազմելը: Այդ նպատակով առանձին մասնաժողով է նշանակված արդարութեան մինիստրի նախագահութեամբ: „Herold" հաղորդում է. Սենատի հրամանի համեմատ առևտրական դատարանների վճռի կատարումը պէտք է լինի անմիջապէս վճռի կայացնելուց յետոյ: Արտաքոյ կարգի դէպքերում դատարանին իրաւունք է տրվում վճռի կատարումը յետաձգել որոշ ժամանակով: „Новости" լրագիրը հաղորդում է. Ներքին գործերի մինիստրութեան վարչութեան վերակազմելու նախագծի քննութիւնը վերջացրած է: Մամուլը այդ մինիստրութեան իշխանութեան տակ կը լինի: Պօլիցիայի մինիստր կը լինի կոմս Շուվալով, նրա օգնական Բարանով: „С.-Петерб. Вѣд." լրագիրը հաղորդում

Մեր ազգային վերակենդանման համար երկու գլխաւոր միջոց ունինք յորոց հաւասարապէս պէտք է օգտուինք: Առաջինն է՝ ընել ինչ որ կարող ենք Հայաստանի բարոյական և նիւթական զարգացման: Այս միայն մեր գործն է: Երկրորդն է՝ Եւրօպիոյ համակրանացն արժանանալ և անոնց աջակցութեամբը կարենալ յաղթել մեր յառաջադիմութեան օտարին կողմէն եղած արգելքներուն: Այդ համակրանքն ստանալու միջոցներն շատ են, սակայն անոնց մէջ գլխաւորն է՝ որ մէջերնիս միաբան ըլլանք, գիտնանք ինչ պէտք է մեզ, ինչ կուզենք, ուր պիտի երթանք, և անհրաժեշտ պայման է արիութեան համբաւ մ'ալ ունենալ: Հայաստանի մէջ խաղաղ կենալու գաղափարն ընդունելութիւն գտած է, դժբախտաբար. բայց Պօլսէն բան մը պէտք էր ընել: Այն օրն որ մի կղերական ձայն բարձրացոյց և իր ազգի բարեկաւութիւնը պահանջեց, աներկիւղ ընդդէմ տիրապետող կառավարութեան, Թիւրքիոյ հայոց կողմանէ արիութեան, թէպէտև բարոյական արիութեան, առաջին ցոյցն էր: Հայ ազգը իր պատրիարքի հետ մէկ եղաւ և Ներսէս սրբազան ճանչցուեցաւ Եւրօպիոյ առջև կատարեալ ներկայացուցիչ հայ ազգի դատին: Ամէն ազգի մէջ, մեծ ազգերու մէջ նոյն իսկ անձնականութիւններ կան, որք իրենց ազգի գաղափարաց կենդանի ներկայացուցիչն կը սեպուին, Ներսէս սրբազան մերն եղաւ: Քանի մը օր առաջ Ազգ. ժողովոյ ատենապետ պ. Մերիէմ-Գուլի նոյն ինքն կըսէր մեզ, «Եւրօպա Ներսէս պատրիարք ըսելով Հայոց ազգ կը հասկնայ:» Այդ հայ ազգը այն ատեն միայն կրնայ ինքնաբերաբար բաժնուիլ Ներսէսէն երբ նա այլ ևս ուրանայ իր պարզած դրօշակը. բայց քանի որ Ներսէս սրբազան պինդ բռնած է այդ դրօշակը, ինչպէս ելլել ըսել թէ հայ ազգը չուզեր Ներսէս պատրիարքը: Երբ Հայ ազգը հարուածէ Ներսէս սրբազան, ինքզինքն հարուածած կըլլայ: Զայս գիտնալով է որ ամեն ատեն երբ Ներսէս պատրիարքի հրաժարականի հարցը երեւան ելած է, ջանացած ենք երբեք ուրիշ գոյն չը տալ այդ հրաժարականի և ըսել թէ Դրան դէմ գանգատներէն է որ պատրիարքը կը հրաժարի և սրբազանն ալ այսպէս ըսած է: Ուրեմն հայ ազգին և իր պատրիարքին մէջ անխզելի կապ մը կայ: Բայց պիտի ըսէք, եթէ Ազգ. ժողովը և հայ ազգը այս տեսակ չեն ըմբռներ խնդիրը, կրնանք դարձեալ պնդել թէ միշտ պատրիարքի հրաժարականը այս եղանակաւ մեկնելու է: Մենք կը պատասխանենք թէ ազգը և Ազգային ժողովը այս ճշմարտութիւնը լաւ ըմբռնած են, իրենց ընթացքն ալ անոր յարմարցուցած, այն պատճառաւ է որ ըսինք թէ անխուսափելի է ազգին վերադրել պատրիարքի հրաժարիլը: Ի բաց առեալ մայիս 23-ի ցաւալի դէպքը, որ անձնասիրութեան մը ծնունդ էր և արդիւնք պատրիարքեան ինքզինքնին անուանող չարամիտներուն յիմարութեանց և զոր մէջերնիս շուտով պիտի գոցենք, Ազգ. ժողովը միշտ պատրիարքի նեցուկ և զօրավիգ եղած է: Ամէն ատեն որ պատրիարքը հարկ տեսած է անոր վրայ կռթնիլ, ժողովքը միշտ պատրաստ էր: Ազգ. ժողովը միշտ կատարեալ ազատութիւն թողուց պատրիարքին անօրինել ազգին ներքին և արտաքին գործերն ինչպէս որ ինքն պատրիարքը կուզէր: Հիմա հնազանդ եղաւ, երբէք նրա հրաժարականը չընդունեց, և պատրիարքին համար մեծ զօրութիւն մ'էր երբ կըսէր թէ ազգին կամքն է որ կը գործեմ: Երբեմն մի քանի դէպքեր պատահեցան բայց անոնք կարեւորութիւնէ զուրկ են: Ազգ. ժողովը շատ թերութիւններ ունի, բայց պատրիարքի համար իր բռնած ընթացքը երբեք պարսաւելի չէ: Իսկ այժմ քիչ մը կերպարանափոխ կը սկսի ըլլալ այդ ալ բռնութեամբ զինքը հոն կը մղեն, ինչպէս քիչ մը վերջը պիտի տեսնուի:

Բայց երբ կուզան ըսել թէ ժողովուրդն է որ պատրիարքի աջակից չէ, այս ալ վերջին աստիճան անիրաւ ամբաստանութիւն մ'է:

Այն օրը որ Ներսէս սրբազան օգուտ քաղելով պարագաներէն Հայաստանի վիճակի բարելաւութիւնը պահանջեց, այն օրն թարգման եղաւ ազգին փափագմանց և ազգը մոռցաւ չ ր ջ ա բ ե ր ա կ ա ն ի պատրիարքը ու նոր Ներսէսը միայն յիշեց: Խրիմեան սրբազան օր մը Ազգ. ժողովոյ մէջ կը յայտարարէր «Հայաստանի ցաւոցը կենդանի պատկերն եմ ես». Ներսէս սրբազան ալ եկաւ ըսելու «այդ ցաւոց դարմաններու կենդանի ներկայացուցիչն եմ ես»: Ամեն հայ Ներսէսի անունը հնչեց և հայ ազգը Ներսէսի բոլորը այնպիսի միաբանութիւն մը ցոյց տուաւ որուն նմանը քանի կը յիշատակէ մեր պատմութիւնը: Մէկ շունչ մ'էր որ կը շնչէին աշխարհիս բոլոր հայերը: Պատմութեան անկ է օր մը քննել և իր վճիռը տալ: Սակայն ամէնքս ջանացինք որ միաբանութիւնը չը խախտի: Պատրիարքը սխալ կը գործէր թէ լաւ, այդ չէինք փնտռեր, այլ կը փափաքէինք որ ինչ որ կրնանք ընել՝ ընենք որպէսզի Ներսէս պատրիարք ազգին բարոյական զօրութեան մը կռթնած խօսի: Մեր զէնքը կը նմանէր պատերազմի մը մէջ պաշտօնեաներու և զինուորաց զէնքին: Գուցէ զօրավարը սխալ ճամբու մը մէջ մտած է, բայց քննադատելու տեղ չէ այլ պատերազմը և զօրավարը զօրացնելու: Ներսէս սրբազան ինքն կրնայ ըսել որ երբեք պատրիարք մը չէ եղած որ այսքան սէր, համակրութիւն, վստահութիւն գտած ըլլայ բոլոր հայերէն: Եւ Ներսէս սրբազան ունի բաւական թերի կողմեր: Զարմանալին այս է որ երբ դժբախտութիւննիս դեռ կը շարունակէ, երբ մեր յոյսերն ոչ մին իրականացաւ, ժողովուրդը երես չը դարձուց Պատրիարքէն և շարունակեց անոր հետ ըլլալ:

Այս մեր յիշածներն, Ազգ. ժողովոյ և ազգին նկատմամբ, յայտնի ճշմարիտ իրողութիւններն են, բայց և այնպէս կուզեն չարամիտ և ուղղմիտ ճամբած անձեր անպատճառ խեռ ձգել պատրիարքի և ժողովքի ու ժողովրդի մէջ: Սակայն մայիս 23-ին ճշմարիտ ժողովուրդը ցոյց տուաւ թէ քանի որ այդպիսի անձեր պատրիարքի կողմէ կը խօսին իրենք այդպիսի անպիտաններու ետևէ չեն կարող ընթանալ: Խաժամ մը միայն գնաց պատրիարքի տունը, ու սակաւաթիւ երեսփոխանք, թէպէտև լաւ կըլլար որ զոհէին անձնասիրութիւննին և երթային պատրիարքի մօտ դաս մը տային այդ անձանց:

Սակայն ժամը ուշ է, նամակը երկար եղաւ, շարունակութիւնը առաջիկայ թղթատարով:

Հայկակ

Է. Զինովիեվ արտաքին գործերի մինիստրութեանը առաջարկեց, որ անհրաժեշտ է ճնշումն գործել Բ. Դրան վրա քիւրդերի արշաւանքները Պարսկաստանի վրա դադարեցնելու համար: Այդ արշաւանքները վատեն ազդում ռուսաց անդրկովկասեան առևտրի վրա:

ԼՈՆԴՈՆ, 9 յունիսի: Եգիպտական գործերի մասին կոնֆերենցիան կը գումարվի Կ. Պոլսի մէջ հինգշաբթի յունիսի 22-ին, առանց Թիւրքիայի մասնակցութեան:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ“ ԱՆՈՒՆՈՎ ԳՐՔՈՅԿԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ.

Խնդրում ենք այն անձինքներից թէ բաղու և թէ այլ քաղաքներ, որոնց մօտ գտանվում են այդ գրքոյկի բաժանորդական թերթեր մինչև յունիսի 20-ը մեզ հասցնել. թերթերը պիտի ուղարկուին ուղղակի իմ հասցէին. Баку. „Россійскій магазинъ“ Абелу Апресянцу. Մինչև յուլիսի վերջը մեզ ուղարկուած բաժանորդական թերթերի մասին մի երկրորդ նամակաւ մեզ տեղեկութիւն տալ խնդրում ենք ուղարկող պարոններից, երկու թերթ մեզանում պակաս լինելուն առթիւ:

Բաժանորդներին յանձնելի գրքերը արդէն տպագրութեան տակ են Թիֆլիսում:

Հրատարակիչ.—Աբէլ Ապրեսեանց.

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ԺՕՐԺ ՍԱՆԴ'Ի
„ՎԱՐԴԱԳՈՅՆ ԱՄՊ“
Մանկական վէպը:
Ծախվում է 'ի Նպաստ մի էքաւոր աշակերտի կենտրոնական և կովկասեան գրախանութներում:
ԳԻՆՆ Է 25 կ.:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՀԵՍՏՈՒՄ
ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ
Արժանաւոր գալիքի № 144-ում Ծանր Ուսում և գրեթէ դարձեալ Մոսկվայի Ազգային Մեծագոյն ամենամեծ տեսակ Դոնդոնի Ֆաբրիկայի վերջին դարձեալ ստացուածքներ:
ՀԱՅԵԼԻՆԵՐԸ և ՇՐՋԱՆԿՆԵՐԸ:
57—60

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ խորհուրդը պատիւ ունի յայտնել ընկերութեան յարգոյ անդամներին, թէ առաջիկայ կիւրակին, 13 սոյն յունիսի, նշանակված է ընդհանուր ժողով Արծրունու Թատրոնում, առաւօտեան 11 ժամին:

Ժողովի պարապմանն առարկայ են հետևեալները.

1) Վերացնել և վաւերացնել խորհրդի ընդհանուր հաշիւը:

2) Վերաքննել քաղաքում ուսանող չքաւոր հայ աշակերտների համար հիմնվելի Ապաստանարանի ծրագիրը՝ խորհրդից կազմուած:

3) Վերաքննել Մշեցի մշակներից (ընկերութեանս հովանաւորութեան ներքոյ) կազմուելիք փոխադարձ օգնութեան ընկերութեան կանոնագրութիւնը:

3—4

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ, որ այժմ արդէն Մանգլիսում է ապրում, յանձն է առնում պարապել երեխաների հետ՝ թէ արքունական և թէ հայոց ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների հետ:

Պայմանները կարելի է առաջարկել հետևեալ հասցէով. Манглисъ, Габріэль Мирзоевъ, въ рощѣ, дача Марѳы Тимоѳѣевой.

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ
ՄԻՆՉԵՒ ԱՄՍՎԱՅ ՎԵՐՋԸ
ՄԱՏԻՏՆԵՐ 8 կ. դիւժինը, ԾՐԱՐՆԵՐ 3 կ. հարիւրը, սապօն 3 կ. հատը, արևի ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ 50 կ., ՇՂԹԱՆԵՐ (նոր ոսկուց) ժամացոյցի համար 50 կ., կրաններ 10 կ., ջրի ամաններ 30 կ., կժեր 25 կ., կախարաններ 4 կ., ՖԻԼՏՐԱՆԵՐ 3 ր., ԾԸԾԻՆԵՐ 1 ր., հայելիներ 35 կ., վարտիքներ 4 ր., պիջակներ 6 ր., ԱՄԲՈՂՋ ՀԱԳՈՒՍՏ 13 ր., գլխարկներ 1 ր., ՀԸ ԹՐՋՎՈՂ վերարկուներ 6 ր., շչէօտկա 90 կ., ԱՍԵՂՆԵՐ 100 հատը 8 կ., կանանց և տղամարդկանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 2 ր. 50 կ. դիւժինը, ՄԵՂՐԱՄՈՄ 32 կ. անգլիական ֆունտը, կանֆետներ 40 կ. ֆունտը, ԴՐԱՊ, տրիկո, ԱԼԲՈՄՆԵՐ, բրիտանական մետալի առարկաներ և այլն ԿԻՍԱԳՆՈՎ, մոմեր, մուրաբա և այլն շատ էժան:
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ
ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՅ:
47—50

Նէրսիսեան դպրանոցի բարձր դասատան աշակերտներից մինը կամենում է պատրաստել աշակերտներ և աշակերտուհիներ՝ բոլոր Հայ դպրոցների ստորին և միջին դասատանց համար: Յանկացողք թող դիմեն Ծովիանովի կարվանսարայում պ. Գրիգոր Կակեանի խանութը № 1.

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ, Գօլովինսկի պրոսպեկտի վրա, տուն Ճարտարապետ Բէլօի: Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից:

ИЗЪ ЦЕНТРАЛЬНОЙ БИБЛІОТЕКИ
ВЪ
ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ
Взято пальто съ документами въ памятной книжкѣ. Документы эти слѣдующіе: отпускной билетъ изъ Императ. Москов. Техническаго училища и свидѣтельство для проѣзда по уменьшенному тарифу по желѣзнымъ дорогамъ. Имя студента-техника Аркадій Бабовъ. Убѣдительно прошу взявшаго пальто или нашедшаго эти документы возвратить въ Центральную Библіотеку.

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
БРОШЮРА
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.
Ամենայն էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԼՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվոյաժներ 1. 30—12 ր., սուն դուկներ ճանապարհի 6—35 ր., մարանները (погребцы) 6—25 ր., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուխոնների պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ումիվալնիկներ մրամօրնի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) րէվոլվերի, սիգար Ռէնգարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարօվի գիլզի պապիրօզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՅ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էլինէմի. կօֆէ էլինէմի և Միխէլսօնի. Պետերբուրգու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինէվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) ղուլթուկ (пухъ), պադնոսներ սամովարի և չայու, դանակ չանգալ զանազան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. գրչակոթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիբի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխոնի 1—40 մինչև 3—20 կ. պրիբօր. միս կարելու մաշինայ. Անգլիական ութներ, Բրիտանսկի չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, Ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—Ջուր մաքրելու, կրասմալ կարօրկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ծակոյ, թուղթ փոշտի, կանվերտներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարետախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիեներ, գդալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանսկի դուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուսիչկէք 45 կ.—5 ր., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. Ջուխտ, պղնձապոշկաններ վարշավու, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. Ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուստիկներ, զոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շաքի. սանդրեր շիրմայու ոսկորէ, գուտապերչվի և փայտէ, չչոտկաներ գլխի, շորի, սապոնի, պոլի և կարտի համար. չուլքի թել (бумага) մատոկի կօճի և շալէ (гарусъ) ֆելչատկէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գողանտերեյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կտոր, հոտավէտ ջրեր, պուդրա, գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:
Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԵԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում. (въ складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.
Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.
69—180
Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ
ՕՐԻՈՐԴ ԽԻԶԱՆԵԱՆՑ
ՍՕԼՕԼԱԿՈՒՄ, Միրզոյեվների տուն, Քաղաքային Վարչութեան հանդէպ:
Յանկացողները կարող են դիմել նրան ԱՄԵՆ ՕՐ, ժամը 2-ից, մինչև 5 ժամ երեկոյեան:
10—10

JOURNAL D'ORIENT
HEBDOMADAIRE
Paraissant a VIENNE (Autriche)
ABONNEMENTS: 1 an. . . 8 roubles
6 mois. . . 4 —
S'adresser à F. Salles, avocat
1. Neurmarkt 9. (Vienne)
Sans ajouter le titre du journal.

Дозволено цензурою, Тифлисъ, 10 Іюня 1882 года.
Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час. Лор.-Мелик. ул., каз. д.